# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

## ՈՐՈՇՈՒՄ

<<05>> հունիսի 2014թ.                                        N 111

ք. Արմավիր

### *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի երրորդ մասով, $244^{9}$-րդ հոդվածի երրորդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գեոդեզիայի և հողային պետական տեսչության պետի 2014 թվականի մայիսի 5-ի թիվ ՍՄ/2719-14 գրությունը.

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի ղեկավարին հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու, հողամասերի գործառնական նշանակության և հողատեսքերի ինքնակամ փոփոխությունը չկանխելու համար ենթարկել վարչական պատասխանատվության նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով՝ մեկ հարյուր հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սահմանված տուգանքները վճարել տասնհինգօրյա ժամկետում պետական բյուջեի N 900005243119 հաշվեհամարին և մուծված անդորրագրերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝                                        Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ